

**1.**

**ՖԻԶԻԿԱՄԹԵՄԱՏԻԿԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
PHYSICS AND MATHEMATICS  
ФИЗИКО-МАТЕМАТИЧЕСКИЕ НАУКИ**

**ՖԻԶԻԿԱԿԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ  
ԱՌԱՋԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Կ. Ի. ՂԱՐԱԽԱՆՅԱՆ**  
Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու,  
ԳՊՀ պրոֆեսոր

Ֆիզիկական երևույթների ուսումնասիրությունը բերում է ֆիզիկական օրենքների հայտնագործմանը, որոնք իրենցից ներկայացնում են մաթեմատիկական կապեր՝ տվյալ երևույթը բնութագրող տարրեր ֆիզիկական մեծությունների միջև։ Ուսումնասիրենք կոնկրետ երևույթ՝ մարմնի շարժումը  $F$  ուժի ազդեցության տակ։ Փորձը ցույց է տալիս, որ մարմննը ձեռք է բերում ա արագացում։ Մեր նպատակն է ստանալ մաթեմատիկական կապ ա և  $F$  մեծությունների միջև՝ չփոխելով մարմնի ո զանգվածը։ Փորձի ընթացքում մարմնի վրա ազդելով տարրեր ուժեր՝  $F_1$ ,  $F_2$ ,  $F_3$ .... չափում ենք մարմնի արագացման ընդունած համապատասխան արժեքները՝  $a_1$ ,  $a_2$ ,  $a_3$ ....։ Այսպիսով, փորձի արդյունքները երկու՝  $F$  և  $a$ , մեծությունների ընդունած արժեքների շարքն է։ Պարզվում է, որ ուժի յուրաքանչյուր արժեքին համապատասխանում է արագացման որոշակի արժեք։ Այս տվյալների հիման վրա ստացվում է մաթեմատիկական կապ ա և  $F$  ֆիզիկական մեծությունների միջև՝  $a = \varphi(F)$ , որն անվանվում է ֆիզիկական օրենք։

**Այսպիսով՝ ֆիզիկական օրենքները սահմանվում են փորձերի արդյունքների հիման վրա։**

Քանի որ փորձի ընթացքում չափվում են մեծությունների թվային արժեքները, ապա պարզ է դառնում, որ նրանց չափման ճշտությունը կարևոր նշանակություն ունի ֆիզիկական օրենքների հայտնաբերման համար։ Չափման արդյունքը, ինչպես հայտնի է, երբեք չի կարող լինել բացարձակ ճշշտ։ Նրա ճշտության աստիճանը կախված է չափողական տեխնիկայի կատարելությունից և այլ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներից։

**Ուրեմն՝ ֆիզիկական օրենքներն ունեն մոտավոր բնույթ։**

Հարկ է նշել, որ ֆիզիկական օրենքների մոտավոր բնույթը չի նվազեցնում նրանց օբյեկտիվ նշանակությունը։ Նրանք մոտավոր կերպով ճիշտ են նկարագրում բնության մեջ տեղի ունեցող երևույթները։ Բնությունը ճանաչելու ընթաց-

քում նրանց ճշտության աստիճանը անընդհատ բարձրանում է:

Բոլոր փորձնական փաստերը, որոնց հիման վրա ձևակերպվում է որոշակի ֆիզիկական օրենք, բացի այն բանից, որ այն սահմանափակված է չափման ճշտությամբ, սահմանափակված է նաև չափվող մեծությունների փոփոխման միջակայքով:

**Նշանակում է, որ յուրաքանչյուր ֆիզիկական օրենք ունի կիրառելիության սահմաններ:**

Ֆիզիկական օրենքների կիրառելիության սահմանները տրվում են օրենքն արտահայտող մեծությունների արժեքների փոփոխման թույլատրելի միջակայքով, այդ մեծությունների չափման ամենաբարձր ճշտությամբ և այն ֆիզիկական երևույթների շրջանակով, որոնց համար տվյալ օրենքն իմաստ ունի:

Սորից դիտարկենք ուժի ազդեցության տակ մարմնի շարժման երևույթը. փորձնական արդյունքների հիման վրա կհանգենք Նյուտոնի երկրորդ օրենքին՝ մարմնի արագացումը ուղիղ համեմատական է նրա վրա ազդող ուժին և հակադարձ համեմատական է մարմնի զանգվածին: Այն մաթեմատիկորեն գրվում է այսպես՝

$$a \sim \frac{F}{m} \quad (1):$$

Պարզվում է, որ այս օրենքը ճիշտ չէ, եթե չափումները կատարվեն ավելի ճշգրիտ. ստացվում է, որ մարմնի զանգվածը ոչ թե հաստատում է, ինչպես ընդունվում է (1) օրենքը ձևակերպելիս, այլ կախված է նրա արագությունից: Փորձերը ցույց են տալիս, որ բերված օրենքը կիրառելի է միայն մարմնի արագության այնպիսի արժեքների համար, որոնք շատ փոքր են վակուումում լույսի արագության՝  $C=3 \cdot 10^8 \text{մ/վ}$ , արժեքից: Պազվում է նաև, որ այս օրենքը կիրառելի է միայն մակրոաշխարհի համար:

Ֆիզիկայում աշխարհի բաժանումը մակրո և միկրոաշխարհների տեղի է ունեցել ոչ թե մեխանիկական եղանակով, այլ պայմանավորված է նրանց մեկնաբանության սկզբունքային տարրերությամբ: Այսպես, պարզվում է, որ բոլոր մարմնները դրսենորում են ալիքային հատկություններ, որոնք առավել զգալի են միկրոաշխարհում: Այս վարկածը առաջ է քաշել ֆրանսիացի ֆիզիկոս Դե-Բրոյլը (1892-1987) 1924թ.: Ըստ Դե-Բրոյլի՝ յուրաքանչյուր մասնիկի հետ կապվում է որոշակի ալիք, որի երկարությունը կախված է մասնիկի  $P=mV$  իմպուլսից՝

$$\lambda = \frac{\hbar}{p} \text{ կամ } \lambda = \frac{\hbar}{mV} \quad (2),$$

որտեղ  $\hbar=6,62 \cdot 10^{-34} \text{ Զ.վ}$  Պլանկի հաստատումն է: Մասնիկներին վերագրված այս ալիքները անվանվում են մատերիայի կամ Դե-Բրոյլի ալիքներ, իսկ  $\lambda$  -ն՝ Դե-Բրոյլի ալիքի երկարություն:

Եթե մասնիկը շարժվում է մի այնպիսի տիրույթում, որի չափերը շատ անգամ մեծ են  $\lambda$  -ից, այս դեպքում նրա ալիքային հատկությունները կարելի են անտեսել: Այդպիսի մասնիկը կոչվում է դասական մասնիկ, իսկ նրա շարժումը նկարագրող մեխանիկան՝ **դասական կամ նյուտոնյան մեխանիկա**, որի հիմքում

ընկած են Նյուտոնի օրենքները: Երբ մասնիկի շարժման տիրույթի չափերը համեմատելի են Հ -ի հետ, այդ դեպքում մասնիկը միաժամանակ հանդես է բերում և մասնիկային և ալիքային հատկություններ: Այդպիսի մասնիկի շարժումը նկարգրող մեխանիկան անվանվում է քվանտային մեխանիկա:

**Այսպիսով՝ մակրոաշխարհի վարքը նկարագրող ֆիզիկան դասական ֆիզիկան է, իսկ միկրոաշխարհինը՝ քվանտային ֆիզիկան:**

Ցուրաքանչյուր ֆիզիկան օրենք բանաձևելիս պետք է ներկայացնել այնպես, որ այն անկախ լինի մեծությունների միավորների ընտրությունից: Այդ անկախությունը ապահովելու համար պետք է օրենքն արտահայտող հավասարման երկու մասերն էլ ունենան նույն չափայնությունը: Դրա համար անհրաժեշտ է մոցնել համեմատականության գործակիցներ, որոնք ապահովում են միայն բանաձևի աջ և ձախ մասերի չափայնության միատեսակությունը, իսկ նրանց թվային արժեքը բնութագրական չէ տվյալ օրենքի համար: Այս պարագայում հնարավոր է հետևյալ երկու դեպքերը՝

1. օգտվելով ստացված բանաձևից սահմանվում է որևէ մեծության միավոր: Որպես օրինակ դիտարկենք (1) առնչությունը: Մտցնելով համեմատականության Կ գործակիցը, այն ներկայացնենք հետևյալ տեսքով՝

$$a = k \frac{F}{m} \text{ կամ } F = \frac{ma}{k} \quad (3):$$

Այս բանաձևից սահմանվում է ուժի միավորը՝ 1 նյուտոնը որպես ուժ, որն ազդելով 1կգ զանգվածով մարմնի վրա՝ նրան հաղորդում է  $1\text{մ}/\text{s}^2$  արագացում: Ուժի միավորի այսպիսի սահմանման դեպքում կ-ն ընտրվում է հավասար մեկի, և (3) բանաձևը կունենա հետևյալ տեսքը՝

$$a = \frac{F}{m} \text{ կամ } F = ma \quad (4):$$

2. Օրենքն արտահայտող բանաձևի մեջ բոլոր մեծությունների չափման միավորները նախօրոք սահմանված են: Օրինակ՝

$$F = G \frac{m_1 m_2}{r^2} \quad (5):$$

Տիեզերական ծգողության օրենքն արտահայտող (5) բանաձևի մեջ համեմատականության գործակիցը կ-ի վիճարեն նշանակված է G-ով: Այն չափայնություն ունեցող գործակից է և անվանվում է գրավիտացիոն հաստատուն: Ընտրելով G-ի միավորը 1  $\text{Նմ}^2/\text{կգ}^2$ ՝ (5) բանաձևում աջ և ձախ մասերը կունենան նույն չափայնությունը:

**Ուրեմն՝ յուրաքանչյուր ֆիզիկական օրենքն արտահայտող բանաձևում մտցվում է համեմատականության գործակից:**

Յայտնի է, որ յուրաքանչյուր ֆիզիկական երևույթ տեղի է ունենում տարածության և ժամանակի մեջ: Այդ պատճառով էլ երևույթը նկարագրող ամեն մի օրենք իր մեջ բացահայտ կամ ոչ բացահայտ ձևով պարունակում է տարածաժամանակային մեծություններ՝ կոորդինատները և ժամանակը: Յայտնի է, որ այս մեծություններն ինաստ ունեն միայն այն դեպքում, երբ ցույց են տրվում այն հաշ-

վարկման համակարգը, որի նկատմամբ նրանք չափվում են: Սակայն հաշվարկման համակարգի ընտրությունը, ինչպես գիտենք, կամայական է. այն հանդես է գալիս որպես օժանդակ միջոց՝ ֆիզիկական երևույթը նկարագրելու համար: Այստեղ, բնականարար, հարց է ծագում՝ ի՞նչ հաշվարկման համակարգ պետք է ընտրել, որպեսզի նրա նկատմամբ սահմանված ֆիզիկական օրենքը ճիշտ նկարագրի օբյեկտիվորեն գոյություն ունեցող ֆիզիկական երևույթները: Այլ խոսքով, այս հարցը կարելի է ձևակերպած այսպես. եթե ֆիզիկական օրենքը ձևակերպված է որևէ համակարգում որոշակի բանաձևի տեսքով, կփոխվի՝ արդյոք նրա տեսքը այլ համակարգին անցնելիս: Պարզվում է, որ մեկ հաշվարկման համակարգից մյուսին անցնելիս ֆիզիկական օրենքները պահպանում են իրենց տեսքը: Ֆիզիկական օրենքների այս հատկությունը անվանվում է ինվարիանտություն:

**Այսպիսով, ֆիզիկական օրենքների տեսքը կախված չէ հաշվարկման համակարգի ընտրությունից. նրանք մնում են ինվարիանտ (անփոփոխ) մեկ համակարգից մյուսին անցնելիս:**

Վերջում նշենք, որ տարբեր ֆիզիկական օրենքների կիրառելիության սահմանները խիստ կերպվ տարբերվում են իրարից, իսկ կան օրենքներ, որոնք չունեն կիրառելիության սահմաններ, այսինքն՝ նրանք կիրառելի են բոլոր հայտնի ֆիզիկական երևույթներում: Այդ օրենքների բվին են պատկանում էներգիայի, ինպուլսի, ինպուլսի մոմենտի, լիցքի և այլ պահպանման օրենքներ:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Ռ. Ֆեյնման, Ֆիզիկական օրենքների բնույթը, Երևան, «Դայաստան», 1975**
2. **Ա. Ա. Դանիելյան, Կ. Ի. Ղարախանյան, Ֆիզիկական օրենքների ինվարիանտությունը, Մաթեմատիկական և ֆիզիկական դպրոց, N3, 43, 1982**
3. **Կ. Ի. Ղարախանյան, Ն. Ա. Կուտուզյան, Տարածության և ժամանակի դասական մոդելը, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածոր (բնական գիտություններ), N8, 13. 2006**
4. **Ա. Յ. Աբոյան, Մեխանիկա և մոլեկուլային ֆիզիկա, Երևան, 2006**

#### ОСОБЕННОСТИ ФИЗИЧЕСКИХ ЗАКОНОВ

**K. I. KARAKHANYAN**

В работе рассматриваются особенности физических законов: они определяются экспериментальным путем, имеют приближенный характер и пределы применимости. В каждый закон вводится коэффициент пропорциональности, поведение макромира описывается законами классической физики, а в микромире — законами квантовой физики.

#### FEATURES OF THE PHYSICAL LAWS

**K. I. GHARAKHANYAN**

The work contains the features of the physical laws: they are determined by experience, have an approximate nature and limits of applicability. Each law includes a coefficient of proportionality. The behaviour of the macrocosm is described by the laws of classical physics, and the behaviour of the microcosm by the laws of quantum physics.